

Նախագիծ. «Մեքաստացիներ» վոկալ համույթը՝ մասնագիտական զարգացման և ինքնակրթության միջոց

Թեման

«Մեքաստացիներ» վոկալ համույթ

Նպատակը

- ✓ վոկալ խումբը՝ ազգային երգերը տարածելու միջոց,
- ✓ մասնագիտական զարգացման և ինքնակրթության միջոց:

Մասնակիցներ

Կրթահամալիրի դասավանդողներ

Ընթացքը

Համույթն ունի ղեկավար (Մարինե Մկրտչյան), որն ընտրում է ազգային երգերը և բազմաձայնեցնում: Բազմաձայնեցումը կատարվում է Կոմիտասի բազմաձայնեցման սկզբունքով՝ ձայնամասերը հիմնականում ազգային երգերի մեղեդային կառույց ունեն, որոնց համատեղ հնչողությունը հարմոնիկ է: Նյութը ներկայացնում է համույթի ղեկավարը, առաջարկում է բազմաձայնության իր տարբերակը: Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուրն արտահայտում է իր կարծիքը, առաջարկում ձայնամասի փոփոխության ենթարկած տարբերակ կամ նոր ձայնամաս: Միասին ունկնդրելով, ընտրում են այն տարբերակը, որն ավելի համապատասխան է տվյալ երգի հարմոնիկ կառույցին: Նույն սկզբունքով փոփոխության է ենթարկվում նաև երգի կառույցը, հատված-հատված երգելով և համադրելով, մշակում են ձայնամասերը: Բազմիցս երգելուց ու լսելուց հետո, երգը վերջնական տեսքի բերելով, սովորում են ձայնամասերն ու կատարում:

Վոկալ համույթը իրականացնում է [«Կոմիտասի գրառած երգերի կատարում, ձայնագրում»](#) նախագիծը: Կոմիտասի գրառած, չկատարված երգերը կատարում են «Մեքաստացիներ» վոկալ համույթի մեներգիչները: Երգերը ընտրում և վերականգնում է համույթի ղեկավարը, մեներգիչները փորձում են՝ որ երգն է «իրենցը», որն է համապատասխան իրենց խառնվածքին, ձայնին, որն է հարազատ: Վերականգնված երգերը ուսուցանում է համույթի ղեկավարը, քանի որ յուրաքանչյուր երգ պահանջում է կատարման իր ձևը, միասին գտնում են այն ու կատարում: Համույթի անդամները ունկնդրում են, հայտնում իրենց կարծիքը, որից հետո միայն ներկայացվում է հանրությանը:

Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը

Աշխատանքը անընդհատ է, շարունակական և անժամկետ:

Արդյունքները

- ✓ խումբը կազմում է իր երգացանկը և ելույթներով հանդիսանում կրթահամալիրում, այլ բեմահարթակներում՝ տարածելով ազգային երգը,
- ✓ կատարում է ձայնագրություններ, որոնք տարածում է ինչպես կրթահամալիրի կայքի, այնպես էլ աուդիոձայնագրությունների միջոցով: